ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 սեպտեմբերի 2026 թվականի N 1491-Ա

ԱՐՏՈՒՐԻԿ ՄԱՔՍԻՄԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով, հիմք ընդունելով Արտուրիկ Մաքսիմի Մկրտչյանի 2026 թվականի օգոստոսի 12-ի դիմումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան Նար-Դոսի 86 հասցեում գտնվող 0.07200 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված 159,84 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքում, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում՝ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, նկատի ունենալով, որ «Աշոտ Հակոբյան Գուրգենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից կատարված չափագրման արդյունքում պարզվել է, որ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան Նար-Դոսի 86 հասցեում գտնվող սեփականատեր Արտուրիկ Մաքսիմի Մկրտչյանին պատկանող 0.07200 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում 1989 թվականին ինքնակամ կառուցվել է 159.84 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինություններ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Արտուրիկ Մաքսիմի Մկրտչյանին պատկանող Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, ք.Հրազդան Նար-Դոսի 86 հասցեում 0.07200 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի վրա 1989 թվականին ինքնակամ կառուցված 159,84 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունները համարել օրինական՝ համաձայն

«Աշոտ Հակոբյան Գուրգենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0652-0007):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտուրիկ Մաքսիմի Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

03 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1492-Ա

ԶՈՅԱ ԿԱՄԻՍԱՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28 -ի թիվ 1667-Ն որոշման և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 12-ի N 139-Ա որոշման հավելվածը և էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացվող աճուրդի արդյունքների մասին 2026 թվականի սեպտեմբերի 04-ի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 70/24 հասցեում գտնվող 07-001-0142-0192 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.0024 հա մակերեսով հողամասը 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ արժեքով օտարել Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 69 շենքի 26 բնակարանի բնակիչ Զոյա Կամիսարի Վարդանյանին՝ տնտեսական շինություն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.0024 հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Զոյա Կամիսարի Վարդանյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Զոյա Կամիսարի Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1493-Ա

ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱԶԱՐԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ
ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28 -ի թիվ 1667-Ն որոշման և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 12-ի N 139-Ա որոշման հավելվածը և էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացվող աճուրդի արդյունքների մասին 2026 թվականի սեպտեմբերի 03-ի արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս Պուրակային փողոց 22/2 հասցեում գտնվող 07-001-0523-0090 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.006 հա մակերեսով հողամասը 2 890 000 (երկու միլիոն ութ հարյուր իննսուն հազար) դրամ արժեքով օտարել Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 128 շենքի 17 բնակարանի բնակիչ Կարեն Վարդազարի Հովսեփյանին՝ տնտեսական շինություն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.006 հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Կարեն Վարդազարի Հովսեփյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Վարդազարի Հովսեփյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

04 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1494-Ա

ՏԱԹԵՎԻԿ ԳՐԻԳՈՐԻ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28 -ի թիվ 1667-Ն որոշման և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 12-ի N 139-Ա որոշման հավելվածը և էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացվող աճուրդի արդյունքների մասին 2026 թվականի սեպտեմբերի 03-ի արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Մուշ թաղամաս 91 հասցեում գտնվող 07-001-0501-0062 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.06621հա մակերեսով հողամասը 6 480 000 (վեց միլիոն չորս հարյուր ութսուն հազար) դրամ արժեքով օտարել Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 20 շենքի 10 բնակարանի բնակիչ Տաթևիկ Գրիգորի Չիլինգարյանին՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.06621հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Տաթևիկ Գրիգորի Չիլինգարյանին ՝ շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տաթևիկ Գրիգորի Չիլինգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1495-Ա

ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1496-Ա

ՍԱՄՎԵԼ ԿՈՐՅՈՒՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28 -ի թիվ 1667-Ն որոշման և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 12-ի N 139-Ա որոշման հավելվածը և էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացվող աճուրդի արդյունքների մասին 2026 թվականի սեպտեմբերի 03-ի արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս Պուրակային փողոց 15/8 հասցեում գտնվող 07-001-0513-0144 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.00297հա մակերեսով հողամասը 4 112 111 (չորս միլիոն հարյուր տասներկու հազար հարյուր տասնմեկ) դրամ արժեքով օտարել Հրազդան համայնքի Լեռնանիստ գյուղի 2-րդ փողոց 31 տան բնակիչ Սամվել Կորյունի Մարտիրոսյանին՝ տնտեսական շինություն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.00297հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Սամվել Կորյունի Մարտիրոսյանին՝ շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սամվել Կորյունի Մարտիրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1497-Ա

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 252-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N 920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Երևան քաղաքի Ազատության պողոտայի 11 շենքի 32 բնակարանի բնակիչ Հայրապետ Հայրապետյանի 2026 թվականի օգոստոսի 31-ի N 6531 դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հրազդանի համայնքապետարանի 900125001025 հաշվեհամարին որպես փոխադրամիջոցի գույքահարկ վճարված գումարից 2958 (երկու հազար ինը հարյուր հիսունութ) դրամը հետ վերադարձնել Երևան քաղաքի Ազատության պողոտայի 11 շենքի 32 բնակարանի բնակիչ Հայրապետ Հայրապետյանին՝ առաջացած գերավճարի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայրապետ Հայրապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1498-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Արսեն Գրիգորյանի 2023 թվականի նոյեմբերի 28-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված «ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ» ԱՁ-ի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր՝ 2023AGEDSA), Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2026 թվականի օգոստոսի 10-ի թիվ 99 մասնագիտական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին պատկանող Հրազդան քաղաքում գտնվող 07-001-0110-0001 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամասի 1-ին փողոց, 10/3 (ծածկագիր՝ 07011NNNRBJS):

2. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 69 շենքի թիվ 3 բնակարանի բնակիչ Արսեն Գրիգորյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 1-ին փողոց, 10/3 հասցեում գտնվող 33.5քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:

3.Ավտոտնակը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 33.5քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 սեպտեմբերի 2026թ
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1499-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇԵՆՔԵՐԻ, ՊԱՐԻՍՊԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Մացակ Խաչատրյանի և Նարինե Ղարագյոզյանի 2025 թվականի դեկտեմբերի 1-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված «ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ» ԱՁ-ի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր՝ 2023FTF79N), Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2026 թվականի օգոստոսի 10-ի թիվ 100 մասնագիտական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին պատկանող Հրազդան քաղաքում գտնվող 07-001-0517-0024 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամասի 8-րդ փողոց, 1/1 (ծածկագիր՝ 07011PEBGZ4J):

2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ 151/1 տան բնակիչներ Մացակ Խաչատրյանի և Նարինե Ղարագյոզյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 8-րդ փողոց, 1/1 հասցեում գտնվող 204.95քմ արտաքին մակերեսով հասարակական նշանակության առևտրի, հանրային սննդի և կենցաղի սպասարկման շենքը, 20.83քմ արտաքին մակերեսով հասարակական նշանակության առևտրի, հանրային սննդի և կենցաղի սպասարկման շենքը, 11.66քմ արտաքին մակերեսով հասարակական նշանակության առևտրի,

հանրային սննդի և կենցաղի սպասարկման շենքը, և 1.05քմ արտաքին մակերեսով հասարակական նշանակության պարիսպը ճանաչել օրինական:

3.Հրազդան համայնքին պատկանող Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 8-րդ փողոց, 1/1 հասցեում գտնվող 519.5քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել հասարակական կառուցապատման:

4.Առևտրի, հանրային սննդի և կենցաղի սպասարկման շենքերը, պարիսպը և դրանց սպասարկման ու պահպանման համար նախատեսված 519.5քմ մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1500-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԱՇԿԻ, ՊԱՀԱԿԱՏԱՆ, ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Մանվել Մարգարյանի 2024 թվականի դեկտեմբերի 26-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված «Օլյա Տրանդաֆիլովա» ԱՁ-ի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր՝ 20238TNWTA), Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2026 թվականի օգոստոսի 10-ի թիվ 97 մասնագիտական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին պատկանող Հրազդան քաղաքում գտնվող 07-001-0004-0003-ից ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ս. Շահումյան փողոց, 342/5 (ծածկագիր՝ 07011VCGYZVJ):

2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Երևանյան խճուղի թիվ 118 բնակարանի բնակիչ Մանվել Մարգարյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Ս. Շահումյան փողոց, 342/5 հասցեում գտնվող 39.768քմ արտաքին մակերեսով հասարակական նշանակության ծածկը, 10.609քմ արտաքին մակերեսով հասարակական նշանակության պահակատունը, 13.69քմ արտաքին մակերեսով հասարակական նշանակության պարիսպը և 3.752քմ արտաքին մակերեսով հասարակական նշանակության պարիսպը ճանաչել օրինական:

3.Հրազդան համայնքին պատկանող Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Ս. Շահումյան փողոց, 342/5 հասցեում գտնվող 349.0քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել հասարակական կառուցապատման:

4.Ծածկը, պահակատունը, պարիսպները և դրանց սպասարկման ու պահպանման համար նախատեսված 349.0քմ մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1501-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՆԿՈՒՂԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Յուրի Բաբայանի 2023 թվականի օգոստոսի 16-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված «ԳԵՈԼԵՆԴ» ՍՊԸ-ի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր՝ 2023WE6AC2), Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2026 թվականի օգոստոսի 10-ի թիվ 98 մասնագիտական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքին պատկանող Հրազդան քաղաքում գտնվող 07-001-0110-0001-ից ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամասի 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, 7/2 (ծածկագիր՝ 07011ES7PBMC):

2. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 132 շենքի թիվ 16 բնակարանի բնակիչ Յուրի Բաբայանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, 7/2 հասցեում գտնվող 21.19քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության նկուղը ճանաչել օրինական:

3. Նկուղը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 21.2քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1502-Ա

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Էդգար Հակոբյանի 2026 թվականի օգոստոսի 26-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 77 շենքի թիվ 26 բնակարանի բնակիչ Էդգար Սամվելի Հակոբյանին և Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Քրիստինա Սեյրանի Արաբաչյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 11022025-07-0153) Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Զորավար Անդրանիկի պողոտա 142 հասցեում գտնվող արհեստանոցի 58.8քմ մասի գործառնական նշանակությունը փոփոխել առևտրի սրահի, 126.81քմ մասի գործառնական նշանակությունը՝ բնակելի տան, տաղավարի գործառնական նշանակությունը փոփոխել առևտրի սրահի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդգար Հակոբյանին և Քրիստինա Արաբաչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1503-Ա

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 100.0քմ մակերեսով 07-001-0509-0002-ից ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Զորավար Անդրանիկի պողոտա, 102/3 (ծածկագիր՝ 07011SMWKYKJ):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1504-Ա

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման N 1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 32.8քմ մակերեսով 07-001-0616-0051-ից ծածկագրերով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Լ. Օրբելու փողոց, 13/1 (ծածկագիր՝ 07011VUNELMM):

2.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Լ. Օրբելու փողոց, 13/1 հասցեում գտնվող 32.8քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից փոփոխել ընդհանուր օգտագործման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1505-Ա

ԱՐՏԵՄ ՄԿՐՏՉԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2026 թվականի օգոստոսի 17-ի N 198-Ա որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը և Արտեմ Պողոսյանի 2026 թվականի օգոստոսի 25-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 43 շենքի թիվ 16 բնակարանի բնակիչ Արտեմ Մկրտչի Պողոսյանին կառուցապատման իրավունքով տրամադրել Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 47/37 հասցեում գտնվող 12.6քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ ավտոտնակ կառուցելու նպատակով, 20 000 (քսան հազար) դրամ տարեկան վարձավճարով, 10 (տասը) տարի ժամկետով :
2.Հողամասն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում:
3. Արտեմ Մկրտչի Պողոսյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտեմ Մկրտչի Պողոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

04 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1506-Ա

ՎԱՐԴՈՒՀԻ ՇԱՎԱՐՇԻ ՕՀԱՆՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2026 թվականի օգոստոսի 17-ի N 198-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը և Վարդուհի Օհանյանի 2026 թվականի օգոստոսի 31-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 5 շենքի թիվ 1 բնակարանի բնակիչ Վարդուհի Շավարշի Օհանյանին կառուցապատման իրավունքով տրամադրել Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 5/3 հասցեում գտնվող 20.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ ավտոտնակ կառուցելու նպատակով, 20 000 (քսան հազար) դրամ տարեկան վարձավճարով, 10 (տասը) տարի ժամկետով :
2.Հողամասն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում:
3.Վարդուհի Շավարշի Օհանյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդուհի Շավարշի Օհանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

04 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 1507-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՐԻՍ ՍԱՐԳՍԻ ԱԶԱՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով՝ հիմք ընդունելով Բորիս Սարգսի Ազարյանի 2026 թվականի հուլիսի 17-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի «Մարի» համատիրության կառավարչի կողմից 2022 թվականի ապրիլի 6-ին տրված տեղեկանքը, «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վերականգնել Հրազդան քաղաքի Մուշ թաղամաս, 3-րդ փողոց, 1-ին նրբանցք, 18 հասցեում գտնվող, Բորիս Սարգսի Ազարյանին պատկանող 400 քմ մակերեսով օրինական հողամասի և դրա վրա կառուցված 56.26 քմ արտաքին մակերեսով բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը:

2.Հողամասի սահմանները որոշվում են «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

3. Բորիս Սարգսի Ազարյանին պատկանող պահպանման և սպասարկման համար 07-001-0502-0022 կադաստրային ծածկագրով գույքի հասցեն փոփոխել քաղաք Հրազդան, Մուշ թաղամաս 3-րդ փողոց, 1-ին նրբանցք, 18-ից՝ Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մուշ թաղամասի 1-ին փողոց, 24 հողամաս (ծածկագիր՝ 07011TLPXTUK):

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը՝

գրանցել քաղաքացի Բորիս Սարգսի Ազարյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բորիս Սարգսի Ազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2026 թվականի N 1508-Ա

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով լիազոր մարմնի, Հրազդան համայնքի ղեկավարի և թիվ 26 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի մասնակցությամբ կազմավորված տեղամասերը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք Կոտայքի մարզի Հրազդան համայնքի համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու հերթական ընտրություններ անցկացնելու նպատակով սահմանել հետևյալ տեղամասային կենտրոնները.

1)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 4 հիմնական դպրոցը
հասցե՝ քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Շահումյան փողոց 170:

2)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատությունը
հասցե՝ քաղաք Հրազդան Հարավային թաղամաս, Շահումյան փողոց 168:

3)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 13 նախադպրոցական ուսումնական հաստատությունը
հասցե՝ քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Ռ.Միքայելյան փողոց 6:

4)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել N1 ավագ դպրոցի շենքը
հասցե՝ քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Երևանյան 1/3:

5)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 2 հիմնական դպրոցը հասցե՝ քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Սպանդարյան փողոց 72:

6)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցը
հասցե՝ քաղաք Հրազդան, Արամ Խաչատրյան 9:

7)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 8 հիմնական դպրոցը հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 54:

8)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 15 նախադպրոցական ուսումնական հաստատությունը
հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 52:

9)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 14 դպրոցը
հասցե՝ քաղաք Հրազդան,Մաքրավան թաղամաս, Մ.Մեծարենցի 4:

10)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել Կենտրոն թաղամաս 14-րդ շենքի 1-ին հարկ
հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 14/2:

11)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 13 ավագ դպրոցը հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 53:

12)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 13 ավագ դպրոցի հակառակ մուտքից:
հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 53:

13)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել Կոստան Զարյանի անվան մանկական արվեստի դպրոցը
հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 57:

14)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել հասարակական օբյեկտի շենքը հասցե՝ քաղաք Հրազդան Վանատուր թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 58/2:

15)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 6 հիմնական դպրոցը հասցե՝ քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 396

16)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 8 նախադպրոցական ուսումնական հաստատությունը
հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 80:

17)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 5 հիմնական դպրոցը հասցե՝ քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամաս 5:

18) Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 9 հիմնական դպրոցը
հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս:

19)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատությունը
հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 22/1:

20)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոցը
հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 33:

21)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 12 հիմնական դպրոցը
հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 6-րդ փողոց նրբանցք 1:

22) Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 10 ավագ դպրոցը
հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 5-րդ փողոց 9:

23)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 11 հիմնական դպրոցը
հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 14-րդ փողոց 14:

24)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 12 նախադպրոցական ուսումնական հաստատությունը
հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 14-րդ փողոց 20:

25)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել ԵՄՄՈՒԿ-ի շենքի ճակատային մաս
հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փողոց, 16/1:

26)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել ԵՄՄՈՒԿ-ի շենքը
հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փողոց, 16/1:

27)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել հասարակական սպասարկման օբյեկտի շենքը
հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Պուրակային փողոց N 36:

28)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել թիվ 7 միջնակարգ դպրոցը
հասցե՝ քաղաք Հրազդան, Կաքավաձոր թաղամաս 1-ին փողոց 4:

29)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել Լեռնանիստի միջնակարգ դպրոցի շենքը
հասցե՝ քաղաք Հրազդան, բնակավայր Լեռնանիստ, 1-ին փողոց, շենք 33

30)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել Լեռնանիստի մանկապարտեզի շենքը
հասցե՝ քաղաք Հրազդան, բնակավայր Լեռնանիստ, 4-րդ թաղամաս, շենք 6:

31) Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել Ջրառատի միջնակարգ դպրոցի շենքը
հասցե՝ քաղաք Հրազդան, բնակավայր Ջրառատ, 1-ին փողոց, շենք 1:

32)Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել Սոլակի միջնակարգ դպրոցի շենքը հասցե՝ քաղաք Հրազդան, բնակավայր Սոլակ, 2-րդ թաղամաս, շենք 41:

33) Ընտրական տեղամասային կենտրոն սահմանել Քաղսի միջնակարգ դպրոցի շենքը
հասցե՝ քաղաք Հրազդան, բնակավայր Քաղսի, 11 փողոց, 1-ին փակուղի, շենք 1:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

07 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2026 թվականի N 1509-Ա

ՍԱՄՎԵԼ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ
ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28 -ի թիվ 1667-Ն որոշման և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 12-ի N 139-Ա որոշման հավելվածը և էլեկտրոնային համակարգի միջոցով անցկացվող աճուրդի արդյունքների մասին 2026 թվականի սեպտեմբերի 03-ի արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 8-րդ փողոց 25/2 հասցեում գտնվող 07-001-0510-0206 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.0016հա մակերեսով հողամասը 4 105 000 (չորս միլիոն հարյուր հինգ հազար) դրամ արժեքով օտարել Հրազդան համայնքի Լեռնանիստ գյուղի 2-րդ փողոց 31 տան բնակիչ Սամվել Կորյունի Մարտիրոսյանին՝ տնտեսական շինություն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.0016հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Սամվել Կորյունի Մարտիրոսյանին՝ շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սամվել Կորյունի Մարտիրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

07 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2026 թվականի N 1510-Ա

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 121.4քմ մակերեսով 07-001-0350-0009 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամասի Վազգեն Առաջին Վեհափառի փողոց, 33 (ծածկագիր՝ 07011GZTCLZ4):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

07 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2026 թվականի N 1511-Ա

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 140.8քմ մակերեսով 07-001-0350-0005 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամասի Վազգեն Առաջին Վեհափառի փողոց, 35 (ծածկագիր՝ 07011SYSKFNL):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

07 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2026 թվականի N 1512-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի ԹԻՎ 39 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Արտակ Պետրոսյանի լիազորված անձ Ավետիք Հովհաննիսյանի 2026 թվականի օգոստոսի 27-ի դիմումը և Հրազդան համայնքի ղեկավարի 2025 թվականի մարտի 11-ի № 66 կարգադրության հիման վրա ստեղծված հանձնաժողովի 2026 թվականի սեպտեմբերի 2-ի №9 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի քաղաքապետի 1997 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» թիվ 39 որոշման 5-րդ կետում «Լյովա» բառը փոխարինել «Լևիկ» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտակ Պետրոսյանի լիազորված անձ Ավետիք Հովհաննսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

07 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

07 սեպտեմբերի 2026 թվականի N 1513-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Անժիկ Հովհաննիսյանի 2026 թվականի օգոստոսի 28-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ 80ա տան բնակիչ Անժիկ Աշոտի Հովհաննիսյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 08062026-07-0067) Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամաս, 54/2 (ծածկագիր՝ 07011MWFWVEG):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անժիկ Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

07 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2026 թվականի N 1514-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Օֆիկ Մկրտչյանի 2026 թվականի օգոստոսի 6-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կոստանյան փողոցի թիվ 34 տան բնակիչ Օֆիկ Նիկոլի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1860044, տրված՝ 2005 թվականի հունվարի 25-ին) Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային 616-035 հասցեում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Լ. Օրբելու փողոց, 15 (ծածկագիր՝ 07011HVUCKUA):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Օֆիկ Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

07 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2026 թվականի N 1515-Ա

ԱՐԵԳՆԱԶ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշման կարգավորման առարկան.
Հրազդան քաղաքի Րաֆֆու փողոցի 55Ա տան բնակիչ Արեգնազ Պատվականի Գրիգորյանը հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, օրենսդրությամբ սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հրազդան համայնքի բյուջեի հանդեպ հարկային պարտավորությունները չկատարելու արդյունքում փոխադրամիջոցի հարկի գոյացած գույքահարկի, ինչպես նաև հաշվարկված տույժի գումարների գանձումն օրենքով սահմանված կարգով ապահովելու նպատակով:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.
Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.
Համաձայն համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված Հայաստանի Հանրապետությունում գործածվող փոխադրամիջոցի հարկի հաշվառման համակարգից (VXSOFT ծրագիր) ստացված տեղեկանքների JEEP GRAND CHEROKEE 3.6 մակնիշի 37 XU 413 հաշվառման համարանիշի ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում է Արեգնազ Պատվականի Գրիգորյանին և հարկային օրենսգրքով սահմանված կարգով վերջինս չի կատարել փոխադրամիջոցի գույքահարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝
1)Փոխադրամիջոցի գույքահարկի գծով 507531 (հինգ հարյուր յոթ հազար հինգ

հարյուր երեսունմեկ) դրամ հարկային պարտավորություն, որից 376350 (երեք հարյուր յոթանասունվեց հազար երեք հարյուր հիսուն) դրամ 2024-2025թթ. ապառքի գումար և 131181 (մեկ հարյուր երեսունմեկ հազար մեկ հարյուր ութսունմեկ) դրամ 2024-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի օգոստոսի 28-ին ժամը 15:10-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է (հիմք՝ 2026 թվականի օգոստոսի 6-ի azdarar.am էլեկտրոնային հայտարարությունների պաշտոնական կայքում տեղադրված հայտարարությունը) Արեգնազ Պատվականի Գրիգորյանը: Վերջինս վարչական վարույթի լսումներին չի ներկայացել:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 239-րդ հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար Օրենսգրքի 50-րդ գլխով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգիրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերում և կարգով հաշվարկված գույքահարկի պարտավորության գումարները) իրենց պետական գրանցման (հաշվառման) վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները: Հաշվառման (գրանցման) վայրի բացակայության դեպքում ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն մասում նշված գումարները վճարում են իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն հոդվածում նշված գումարները վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով:

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական

սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով, Հարկային օրենսգրքի 4-րդ, 243-րդ, 244-րդ, 247-րդ, 251-րդ, 397-րդ, 400-401-րդ հոդվածներով և 447-րդ հոդվածի 1.1-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Արեգնազ Պատվականի Գրիգորյանից հօգուտ Հրազդան համայնքի բյուջեի գանձել ընդհանուր՝ 507531 (հինգ հարյուր յոթ հազար հինգ հարյուր երեսունմեկ) դրամ չվճարված հարկային պարտավորությունների գումար:

2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և Վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ Արդարադատության նախարարության Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

07 սեպտեմբերի 2026թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2026 թվականի N 1516-Ա

ՆԱՐԵԿ ԺՈՐԱՅԻ ԽԱԼԱԹՅԱՆԻՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշման կարգավորման առարկան.
Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 29 շենքի 1 բնակարանի բնակիչ Նարեկ Ժորայի Խալաթյանը հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, օրենսդրությամբ սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հրազդան համայնքի բյուջեի հանդեպ հարկային պարտավորությունները չկատարելու արդյունքում փոխադրամիջոցի հարկի գոյացած գույքահարկի, ինչպես նաև հաշվարկված տույժի գումարների գանձումն օրենքով սահմանված կարգով ապահովելու նպատակով:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.
Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.
Համաձայն համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված Հայաստանի Հանրապետությունում գործածվող գույքահարկի և հողի հարկի հարկով հարկվող օբյեկտների միասնական համակարգից (vector+ ծրագիր) և փոխադրամիջոցի հարկի հաշվառման համակարգից (VXSOFT ծրագիր) ստացված տեղեկանքների MERCEDES-BENZ S 320 մակնիշի 35 PQ 103 հաշվառման համարանիշի ավտոմեքենան սեփականության իրավունքով պատկանում է Նարեկ Ժորայի Խալաթյանին և հարկային օրենսգրքով սահմանված կարգով վերջինս չի կատարել փոխադրամիջոցի գույքահարկ վճարելու

պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝
1)Փոխադրամիջոցի գույքահարկի գծով 308352 (երեք հարյուր ութ հազար երեք հարյուր հիսուներկու) դրամ հարկային պարտավորություն, որից 225450 (երկու հարյուր քսանհինգ հազար չորս հարյուր հիսուն) դրամ 2018-2020թթ. ապառքի գումար և 82902 (ութսուներկու հազար ինը հարյուր երկու) դրամ 2018-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:
2)Փոխադրամիջոցի գույքահարկի գծով 501210 (հինգ հարյուր մեկ հազար երկու հարյուր տասը) դրամ հարկային պարտավորություն, որից 375750 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ 2021-2025թթ. ապառքի գումար և 125460 (մեկ հարյուր քսանհինգ հազար չորս հարյուր վաթսուն) դրամ 2021-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի օգոստոսի 28-ին ժամը 15:00-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է (հիմք՝ 2026 թվականի օգոստոսի 6-ի azdarar.am էլեկտրոնային հայտարարությունների պաշտոնական կայքում տեղադրված հայտարարությունը) Նարեկ Ժորայի Խալաթյանը: Վերջինս վարչական վարույթի լսումներին չի ներկայացել:
Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.
Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:
Հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 239-րդ հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար Օրենսգրքի 50-րդ գլխով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:
